Հայ-Ռուսական համալսարանում գործող
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0051, Երևան, Հ.Էմինի 123

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ

ԺԲ.00.04– «Դատական իրավունք» (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Նելլի Նիկողոսի Հարությունյանի «Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ ՀՀ օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները (համեմատական-իրավական վերլուծություն)» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Նելլի Նիկողոսի Հարությունյանի «Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ ՀՀ օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները (համեմատական-իրավական վերլուծություն)» վերտառությամբ ԺԲ.00.04– «Դատական իրավունք» (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ ներպետական իրավունքի էվոլյուցիային, այդ ինստիտուտի միջազգային-իրավական հիմքերի ձևավորմանը, միջազգային պայմանագրային համագործակցության առանձնահատկություններին, միջազգային համագործակցության ինստիտուցիոնալ և դատական կառուցակարգերին, ինչպես նաև հանձնման ինստիտուտի և մարդու իրավունքների պաշտպանության հրամայականի միջև հավասարակշռության ապահովման հիմնախնդրին:

Ընդ որում, հեղինակին հաջողվել է հետազոտության համար ընտրել թեմային առնչվող առավել արդիական հարցադրումները: Հանձնման և քրեական գործերով իրավական օգնության ինստիտուտներին առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է հանցավորության դեմ պայքարի հարցում միջազգային համագործակցության կատարելագործման, ինչպես նաև փոխգործակցության շրջանակների ընդլայնման անհրաժեշտությամբ: Հանձնման հետ կապված ժամանակակից զարգացումների վերլուծությունը, վկայում է, որ անհրաժեշտ է էականորեն վերանայել այս իրավական ինստիտուտը՝ այն համապատասխանեցնելով միջազգային հանցավորության դեմ պայքարի ժամանակակից պահանջներին: Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի հետազոտման արդիականությունը պայմանավորված է դրանց նշանակությամբ՝ միջազգային-իրավական տեսության և պրակտիկայի համատեսքտում, քանի որ դրանք անմիջականորեն փոխկապակցված են մարդու իրավունքների, պետությունների ենթադատության, քաղաքացիության և այլ հիմնարար իրավական կատեգորիաների հետ:

Ատենախոսությունում համարժեք ներկայացված են թեմայի և թեմային անմիջականորեն առնչվող առանձին հարցադրումների արդիականության վերաբերյալ բավարար չափով հիմնավորված փաստարկներ: Մասնավորապես, հեղինակն ընդգծել է. «.... Պետությունները, փոխհամաձայնության արդյունքով, միջազգային իրավունքի շրջանակներում են սովորաբար սահմանում հանձնման հետ կապված հետևյալ հարցերը.

-հանձնման հարց կարելի է քննարկել և թույլատրել, եթե կոնկրետ պետությունների միջև գործում է հանձնում նախատեսող երկկողմ կամ բազմակողմ պայմանագիր,

- կատարվել է ընդհանուր քրեական հանցագործություն, որն առաջացնում է հանձնման անհրաժեշտություն,

- կատարված արարքը հանցավոր է համարվում և ազատազրկման ձևով պատժելի է երկու պետությունների օրենսդրությամբ հավասարապես,

- կատարվել է հանձնում առաջացնող հանցագործություն օտարերկրացու կողմից հարցում անող պետության նկատմամբ,

- հանձնվող անձը թաքնվում է կատարող պետության տարածքում,

- անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ պատիժն ի կատար ածելու վաղեմության ժամկետը չի անցել,

- հանձնվող անձը չի հայտնվել պայմանավորվող պետությունների կողմից ընդունված համաներման կամ ներման ակտի գործողության տակ:

Հանձնման պահանջը կարող է վերաբերվել.

ա/ այն մեղադրյալին, որի վերաբերյալ քրեական գործով կայացվել կամ ներկայացվել է որոշում մեկ կամ մի քանի հանցագործություններ կատարելու մեջ մեղադրելով, եթե նույնիսկ դրանցից մեկն ընկնում է հանձնման պահանջի տակ,

բ/ ամբաստանյալին, եթե նա դատարանի կողմից գործի քննության ընթացքում մինչև դատավճռի կայացումը թաքնվել է արտասահմանում,

գ/ դատապարտվածին, եթե նա դատավճռի կայացումից կամ ուժի մեջ մտնելուց հետո հեռացել է երկրի տարածքից:

Ամփոփելով, կարելի է արձանագրել, որ քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ ներպետական իրավունքի էվոլյուցիայի արդյունքում ձևավորվեց տարբեր պետությունների կողմից ճանաչված և նրանց ազգային իրավական համակարգերի համար համընդհանուր նշանակություն ունեցող մի շարք դրույթներ, որոնք, ոչ միայն ապահովեցին այս հարցում պետությունների ազգային իրավունքի միասնականությունը, այլև կանխորոշեցին այս ոլորտում ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորման և զարգացման տրամաբանությունը»:

Ատենախոսությունը շարադրված է գիտական պատշաճ լեզվաոճով, դրանում պահպանված են շարահյուսական և քերականական կանոնները, որպես կանոն, բացակայում են խրթին մտքերը, բացի այդ, հիմնականում, պահպանված են ատենախոսության ձևավորմանը ներկայացվող պահանջները, իսկ այդ կապակցությամբ առանձին, ոչ էական նկատառումներին անդրադարձ է արված ստորև:

Հետազոտության արժանիքներից է նաև ակնհայտ համարժեք գիտագործնական նյութի առկայությունը, ընդ որում, հեղինակը ոչ միայն փորձել է իր փաստարկները հիմնավորել կոնկրետ նորմատիվ փաստաթղթերով, միջազգային փորձի արդյունքներով և տեսական աղբյուրներով (այդ թվում՝ արտասահմանյան հեղինակների մենագրություններում արտացոլված մոտեցումներով), բացահայտել է դրանց ուղղվածությունն ու կիրառման գործնական հիմնախնդիրները, այլև կատարել հետազոտության առանձնահատկություններից բխող և արդիական նշանակություն ունեցող պատմահիրավական և համեմատական-իրավական ուսումնասիրություններ:

Հեղինակն ընտրված թեմայի և դրան առնչվող առավել արդիական հիմնահարցերի առնչությամբ դատողություններ անելիս, դրսևորել է անհրաժեշտ ինքնատիպություն,

տեսական աղբյուրներից, օրենսդրական ակտերից և միջազգային իրավական փաստաթղթերից գիտական ակնկալվող խորությամբ օգտվելու և անհրաժեշտ վերլուծություններ կատարելու հմտություններ:

Մեր կարծիքով հիմնավորված և ուշադրության արժանի են ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացված դրույթների մեծ մասը: Մասնավորապես, գիտական չափանիշներով ընդունելի է ատենախոսի կողմից առաջարկվող «հանձնում» եզրույթի բնորոշումը, որն իր մեջ ներառում է գիտագործնական հատկանիշների ինքնատիպ ամփոփում, և ըստ որի. «**Հանձնումը ազգային իրավունքի պահպանմամբ և միջազգային իրավունքի համապատասխան նորմերի և սկզբունքների իրացման հիման վրա պետությունների միջև իրականացվող իրավական գործողություն է, որի արդյունքում շահագրգիռ պետությունը հայցում և ստանում է հանցագործություն կատարած անձին այն երկրից, որտեղ այդ անձը գտնվում է կամ թաքնվում է՝ նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ վերջինիս նկատմամբ արդեն իսկ կայացված դատավճիռն ի կատար ածելու նպատակով»:**

Գիտական արժեք ունի նաև ատենախոսի այն դիրքորոշումը, ըստ որի՝ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի 483-րդ հոդվածի 16-րդ կետը սահմանել է, որ. «1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 541-ին, 542-րդ, 543 րդ, 544-րդ գլուխների դրույթներն ուժը կորցրած չեն ճանաչվում»: Մինչդեռ շրջանառության մեջ է դրված «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը, որի 80-րդ հոդվածով սահմանված է, որ. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 541-րդ, 542-րդ և 543-րդ գլուխները»: Ատենախոսը գտնում է , որ օրենքի նախագծի հեղինակներն անտեսել են այն հանգամանքը, որ նման մոտեցումն ակնհայտ հետընթաց է, այլ ոչ թե բարելավում կամ կատարելագործում: Քրեական դատավարության նոր օրենսգրքի 1-ին հոդվածը սպառիչ թվարկում է քրեական վարույթը կարգավորող օրենսդրությունը, այն է. «Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական վարույթը կարգավորվում է Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով

48

և սույն օրենսգրքով»: Կարելի է համաձայնել ատենախոսի տեսակետի հետ, որ այս իրավակարգավորումները պետք է հստակ ամրագրվեն քրեական դատավարության օրենսգրքում, քանի որ դրանք անխզելիորեն կապված են քրեական դատավարության կարգավորման առարկայի հետ, այդ ոլորտի անջատ կարգավորումը չհիմնավորված նորարարություն է և ապացուցողական իրավունքի տեսանկյունից նոր քրական դատավարության օրենսգրքից շրջանառվող օրենքի նախագծի ընդունումից հետո քրեական դատավարության օրենսգրքում ոլորտը կարգավորող կարևորագույն գլուխների ուժը կորցրած ճանաչելը խնդիրներ կառաջացնի ոչ միայն Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների, այլև այլ պետությունների իրավապահ մարմինների համար, որոնց տրամադրվում և որոնցից հայցվում է քրեական գործերով համագործակցությունը: Ի վերջո, ազգային օրենսդրությամբ են կարգավորվում խնդրահարույց բնույթի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ պահանջվող անձին մինչև հանձնելը պետք է պահել կալանքի տակ, թե ոչ, ինչպիսի միջոցներ պետք ձեռնարկել նման անձանց փախուստը բացառելու համար, ինչ կարգով և որ փուլում են բողոքարկվում հանձնման մասին որոշումները և մարդու իրավունքներին առնչվող մյուս կարևորագույն հարցերը:

Հեղինակի կողմից մշակվել են նաև օրենսդրությունը բարելավելու վերաբերյալ մի շարք գիտագործնական արժեք ունեցող առաջարկություններ, որոնց մի մասն արդեն իսկ օրենքի ուժ է ստացել (ՀՕ-42-Ն, 2012 թվականի մարտի 19-ին, որով Քրեական դատավարության օրենսգրքում ավելացել են 478.1 (ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալման կարգը), 478.2 (ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ժամանակավոր կալանավորման կարգը), 478.3 (Հանձնման համար կալանավորման կարգը), 478.4 (Արգելանքի վերցրած անձանց իրավունքները):

Ատենախոսության ձևավորումը, կառուցվածքը և ծավալը, հիմնականում, համապատասխանում են սահմանված պահանջներին:

Միաժամանակ, կարծում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ նկատառումները ներկայացված են ստորև.

1. Հետազոտության թեման թելադրում է, որ, ըստ էության, անհրաժեշտ խորությամբ ոչ միայն պետք է ուսումնասիրվեին երկկողմանի, ռեգիոնալ և ունիվերսալ համագործակցության դրսևորումները, այլև չճանաչված պետությունների հետ իրավական համագործակցության տեսական և իրավական հիմքերը:

2. Սկզբունքորեն ողջունելի է հեղինակի դիրքորոշումը ԱՊՀ մասնակից-պետությունների շրջանակում Եվրոպական Միության օրինակով միասնական կալանքի թույլտվության ստեղծման նորարարությունը, ինչն էականորեն կնվազեցներ հանձնման գործընթացի ժամկետներն ու ծախսերը, սակայն այդ հարցի առնչությամբ հետազոտությունն առավել ամբողջական կլիներ, եթե հեղինակն նաև անդրադարձ կատարեր պետությունների իրավասուբյեկտության, քաղաքացիության, դատապարտյալների փոխազնցման ինստիտուտների կոլիզիայի հարցերին:

3. Թեզում այն մոտեցումն է առաջադրված, ըստ որի. «Չնայած հանձնվող անձի իրավունքները ձևավորվել են քաղաքակիրթ երկրների պրակտիկայի արդյունքում, այդուհանդերձ, դրանց մեծ մասը գտնվում են պետությունների ազգային իրավունքով կանխորոշվող հայեցողության շրջանակներում:

Կարծում ենք, որ նման եզրահանգումը հիմնավորված է այն առումով, որ քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ ներպետական իրավունքի էվոլյուցիայի ելակետային հիմքերի շարքում անշուշտ գլխավորը՝ պետության ինքնիշխանության միանշանակ և անվերապահ ճանաչման և հարգման կանխադրույթն է: Պետության ինքնիշխանությունն է, որը կանխորոշում է նրա քրեական իրավազորությունը սահմանելու քրեական իրավախախտումների համար պատասխանատվությունը: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով այդուհանդերձ կարելի է արձանագրել, որ քրեական գործերով իրավական օգնության, այդ թվում հանձնման ինստիտուտի ձևավորումը և զարգացումը գտնվում է երկու տարբեր, սակայն սերտորեն փոխկապակցված իրավունքի ճյուղերի եզրագծում: Եթե հանձնման հարցի լուծումը պայմանավորված նրա ինքնիշխանությամբ հանդիսանում է պետության քրեական իրավազորության իրացումը, ապա տվյալ հարցի շուրջը մյուս պետությունների հետ դիրքորոշումների փոխադարձ համաձայնեցման գործընթացը, այդ թվում հանձման հիմքերի և պայմանների կանխորոշումը գտնվում է միջազգային իրավունքի տիրույթում: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ կոնկրետ պետության ազգային իրավունքի էվոլյուցիայի ուսումնասիրությունը պետք է սերտորեն շաղկապվի միջազգային իրավունքի գերակայության սկզբունքի հետ:

Ատենախոսության հիմնադրույթներին նվիրված հեղինակի հոդվածները հիմնականում տպագրված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում

49

ու ժողովածուներում, որոնք համարժեքորեն են արտացոլում պաշտպանության ներկայացվող եզրահանգումները:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ նկատառումները, կարծում ենք, որ դրանք նկատելիորեն չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը, ըստ այդմ էլ՝ Նելլի Նիկողոսի Հարությունյանի «Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ ՀՀ օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները (համեմատական-իրավական վերլուծություն)» վերտառությամբ ԺԲ.00.04- «Դատական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.04-«Դատական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ռուբեն Մելիքյան**

Ռ□Մելիքյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հարություն Խաչիկյան

«7» մարտի 2022 թ.